

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոչ առևտրային կազմակերպությունների ընտրանքային հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Հետազոտության ժամանակ գործել է կազմակերպությունների 49,7%-ը, չի գործել՝ 29.8%-ը և չեն հայտնաբերվել 20.5%-ը:

2. Հետազոտության մեջ ընդգրկված 779 ոչ առևտրային կազմակերպությունների (առանց արհեստակցական միությունների և արհեստակցական կազմակերպությունների հաշվարկի) անդամների թվաքանակը կազմել է 516.7 հազար մարդ, որի 32.8 %-ը կանայք են:

3. Համաձայն հետազոտությամբ ստացված և գլխավոր համակցության նկատմամբ զնահատված արդյունքների, հանրապետությունում ոչ առևտրային կազմակերպությունների 2001թ. դրամական միջոցների մուտքերը կազմել են 15276.2 մլն դրամ, հաշվեգրված ելքերը՝ 14641.5 մլն. դրամ, իսկ փաստացի ելքերը՝ 14613.1 մլն դրամ:

4. Համաձայն հետազոտության արդյունքների, Ազգային հաշիվների համակարգի «տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների» հատվածին են դասվում գործող ոչ առևտրային կազմակերպությունների 71.8%-ը:

5. «Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների» հատվածին դասվող կազմակերպությունների ցուցանիշների տեսակարար կշիռները բոլոր ոչ առևտրային կազմակերպությունների դրամական միջոցների մուտքերում կազմում են 66.4%, հաշվեգրված ելքերում՝ 68.5%, և փաստացի ելքերում՝ 69.0%:

* *
*

Հետազոտության արդյունքները ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանը հնարավորություն տվեցին՝

- ստանալ տեղեկատվություն ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքների, ինչպես նաև դրանց կողմից բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի վերաբերյալ, որոնք կօգտագործվեն համախառն ներքին արդյունքի կազմում «հասարակական միավորումներ» ճյուղի «թողարկման», «միջանկյալ սպառման» և «ավելացված

արժեքի» հաշվարկների, ինչպես նաև մեթոդաբանության կատարելագործման նպատակով,

- ստանալ տեղեկատվություն տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների, դրանց կառուցվածքի և ուղղությունների վերաբերյալ, ինչը կօգտագործվի Հայաստանի Հանրապետությունում Ազգային հաշիվների համակարգի «տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների» հատվածի հաշվարկների և մեթոդաբանության կատարելագործման նպատակով,
- ստացված տեղեկատվության հիման վրա, ինչպես նաև օգտագործելով ստացված արդյունքների համամասնությունները, կատարել ճշգրտումներ Ազգային հաշիվների համակարգի բոլոր հաշիվներում, մասնավորապես «հասարակական միավորումներ» ճյուղի, ինչպես նաև «տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների» հատվածի մասով,
- հիմք դնել ՀՀ ԱՎԾ բիզնես - ռեգիստրում ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ արդիական տվյալների բազայի ստեղծմանը: Հետազոտության միջոցով ստացված տեղեկատվությունը կօգտագործվի նաև մոտակա տարիների ընթացքում նշված ճյուղի և հատվածի հաշվարկների համար ավելի խորացված (նաև ըստ գործունեության տեսակների) հետազոտություն իրականացնելու համար, որը թույլ կտա առավել ամբողջական տվյալներով համալրել պաշտոնական վիճակագրության համար տեղեկատվության աղբյուր հանդիսացող սկզբնական տեղեկատվական բազան ոչ առևտրային կազմակերպությունների մասով: